

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՆԴԱՐՏԻ
ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

01 **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՄՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

01.040.03

1. Մշակող

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ,
ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2

2. Ստանդարտացման օբյեկտը ստանդարտների դասակարգչի (ՄԴ) կողմից նշումով

Ռիսկի կառավարման վերաբերյալ հասկացությունները՝ համապատասխան սահմանումներով, ՄԴ 01.040.03, 03.100.50:

3. Ազգային ստանդարտի նախագծի անվանումը

ՀՍ «Ռիսկի կառավարում. Տերմիններ և սահմանումներ» :

4. Համապատասխան միջազգային ստանդարտի դրույթներից տարբերվող դրույթները

Ազգային ստանդարտի նախագիծը ներդաշնակեցված է ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 73:2002 միջազգային ուղեցույցին:

5. Հրապարակորեն քննարկման ժամկետը

Երկու ամիս:

6. Դիտողությունների ընդունումը իրականացվում է հետևյալ հասցեով

0051, ք. Երևան, Կոմիտասի պող., 49/2

Հեռ./ֆաքս: (37410) 28-56-20;

E-mail: sarm@sarm.am

7. Ազգային ստանդարտի նախագիծը կարելի է ձեռք բերել

0051, ք. Երևան, Կոմիտասի պող., 49/2

Հեռ. (37410) 23-58-51

ֆաքս (37410) 28-56-20

E-mail: press@sarm.am

կայք www.sarm.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

ՈՒՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տերմիններ և սահմանումներ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ստանդարտի նախագիծը ենթակա չէ կիրառման մինչև դրա ընդունումը
ԵՐԵՎԱՆ

Նախարան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ՅՍՏ 1.0-2001 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

3 ՀԱՍՏԱՑՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ էկոնոմիկայի նախարարի (ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի) 200 թվականի -ի N հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, հմ.

5 Սույն ստանդարտը մշակված է հաշվի առնելով ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 73:2002 «Ռիսկի կառավարում. Բառարան. Ստանդարտներում կիրառման ուղեցույց» (ISO/IEC Guide 73:2002 «Risk management-Vocabulary-Guidelines for use in standards») միջազգային ուղեցույցի դրույթները:

5 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխության տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատուի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի համացանցային (ինտերնետային) կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն՝ առանց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

Ներածություն

Ստանդարտով սահմանված տերմինները կարգաբերված են և արտահայտում են տվյալ ոլորտի հասկացությունների համակարգը:

Յուրաքանչյուր հասկացության համար սահմանված է մեկ ստանդարտացված տերմին:

Տերմինից հետո կլոր փակագծերում տրված նշումն արտահայտում է տերմինի տվյալ նշանակությամբ կիրառման ոլորտը:

Տրված սահմանումներն անհրաժեշտության դեպքում թույլատրվում է փոփոխել՝ ավելացնելով ածանցյալ հատկանիշներ՝ մանրամասնելով դրանց մեջ կիրառվող տերմինների նշանակությունը, նշելով սահմանվող հասկացությանը վերաբերող օբյեկտները: Փոփոխությունները չպետք է խախտեն սույն ստանդարտով սահմանված հասկացության ծավալը և բովանդակությունը:

Ստանդարտում տրված են ստանդարտացված տերմինի ռուսերեն (ru) և անգլերեն (en) համարժեքները:

Ստանդարտում տրված են տերմինների, դրանց ռուսերեն և անգլերեն համարժեքների այբբենական ցանկերը:

Ստանդարտացված տերմինները տպագրված են կիսաթավ տառատեսակով:

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**Տերմիններ և սահմանումներ****Менеджмент риска. Термины и определения****Risk management. Terms and definitions**

Գործարկման թվականը

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են ռիսկի կառավարման ոլորտին վերաբերող տերմիններ և սահմանումներ:

Սույն ստանդարտով սահմանված տերմինները կիրառելի են ռիսկի կառավարման վերաբերյալ բոլոր այն փաստաթղթերում և գրականության մեջ, որոնք ներառված են ստանդարտացման աշխատանքներում և այդ աշխատանքների արդյունքներն օգտագործող բնագավառներում:

2 Նորմատիվ վկայակոչումը

Սույն ստանդարտում վկայակոչված է հետևյալ նորմատիվ փաստաթուղթը՝

ՀԱՏ ԻՍՕ 9000-2006 Որակի կառավարման համակարգեր. Հիմնական դրույթներ և բառարան:

3 Տերմինները և սահմանումները**3.1 Հիմնական տերմինները****3.1.1 ռիսկ****en risk****ru риск**

Իրադարձության (3.1.4) և դրա **հետևանքների** (3.1.2) հավանականության համադրություն (3.1.2)

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ր:

1 «Ռիսկ» տերմինը սովորաբար օգտագործում են միայն այն դեպքերում, երբ առկա է բացասական հետևանքների հնարավորությունը:

2 Որոշ իրադրություններում ռիսկը պայմանավորված է ակնկալվող արդյունքով կամ իրադարձությունից շեղման հնարավորությամբ:

3 Անվտանգության տեսանկյունից՝ տե՛ս [1]-ը:

3.1.2 հետևանք (ռիսկի կառավարում)

en consequence

ru последствие

Իրադարձության (3.1.4) արդյունք

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ր:

1 Իրադարձության արդյունք կարող է լինել մեկ կամ ավելի հետևանք:

2 Հետևանքները կարող են դասակարգվել դրականից բացասական, սակայն անվտանգության տեսանկյունից հետևանքները միշտ բացասական են:

3 Հետևանքները կարող են արտահայտվել ըստ որակի կամ ըստ քանակի:

3.1.3 հավանականություն (ռիսկի կառավարում)

en probability

ru вероятность

Իրադարձության (3.1.4) տեղի ունենալու չափանիշ

3.1.4 իրադարձություն (ռիսկի կառավարում)

en event

ru событие

Հանգամանքների յուրահատուկ ամբողջության առաջացում, որի դեպքում տեղի է ունենում երևույթը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ր:

1 Իրադարձությունը կարող է լինել որոշակի կամ անորոշ:

2 Իրադարձությունը կարող է լինել եզակի կամ բազմակի:

3 Իրադարձության հետ կապված հավանականությունը կարող է գնահատվել տվյալ ժամանակահատվածի համար:

3.1.5 աղբյուր (ռիսկի կառավարում)

en source
ru источник

Օբյեկտ կամ գործունեություն՝ ենթադրյալ **հետևանքներով** (3.1.2)

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Անվտանգության տեսանկյունից աղբյուրը վտանգ է ներկայացնում (տե՛ս [1]-ը):

3.1.6 ռիսկի չափանիշներ

en risk criteria
ru критерии риска

Կանոններ, որոնց համապատասխան գնահատում են **ռիսկի** (3.1.1) կարևորությունը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Ռիսկի չափանիշները կարող են միաժամանակ ներառել արժեք և օգուտներ, օրենսդրական և պարտադիր պահանջներ, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական ասպեկտներ, մասնակից կողմերի (3.2.1) մտահոգություն, գերակայություններ և գնահատման այլ ծախսեր:

3.1.7 ռիսկի կառավարում

en risk management
ru менеджмент риска

Կազմակերպության ղեկավարման և հսկողության համակարգված գործունեություն, որը կիրառելի է **ռիսկի** (3.1.1) նկատմամբ

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Սովորաբար ռիսկի կառավարումը ներառում է ռիսկի գնահատումը (3.3.6), ռիսկի մշակումը (3.4.1), ռիսկի հաղորդակցումը (3.2.4) և ռիսկի ընդունումը (3.4.10):

3.1.8 ռիսկի կառավարման համակարգ

en risk management system
ru система менеджмента риска

Կազմակերպության կառավարման համակարգի տարրերի ամբողջություն, որը կիրառելի է **ռիսկի կառավարման** (3.1.) նկատմամբ

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Ռիսկի կառավարման համակարգի տարրերը կարող են ներառել մարտավարական ծրագրավորում, որոշումների ընդունում և ռիսկին վերաբերող այլ գործընթացներ:

3.2 Ռիսկի ենթարկվող անձանց կամ կազմակերպությունների վերաբերյալ տերմինները

3.2.1 մասնակից կողմ (ռիսկի կառավարում)

en stakeholder

ru причастная сторона

Ցանկացած անհատ, խումբ կամ կազմակերպություն, որոնք կարող են ազդել **ռիսկի** (3.1.1) վրա, ենթարկվել **ռիսկի** ազդեցությանը կամ ունենալ **ռիսկի** ազդեցությանը ենթարկված լինելու զգացողություն

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Որոշումներ ընդունող անձը նույնպես համարվում է մասնակից կողմ:

2 Մասնակից կողմը ներառում է շահագրգիռ կողմը, սակայն ունի ավելի լայն նշանակություն, քան շահագրգիռ կողմը:

3.2.2 շահագրգիռ կողմ (ռիսկի կառավարում)

en interested party

ru заинтересованная сторона

Կազմակերպության գործունեությանը կամ հաջողությանը շահագրգռված անձ կամ անձանց խումբ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Շահագրգիռ կողմեր են համարվում սպառողները, կազմակերպության սեփականատերերը, աշխատողները, մատակարարները, միությունները, գործընկերները կամ ընկերությունները:

2 Անձանց խումբը կարող է կազմված լինել կազմակերպությունից, դրա մասից կամ մի քանի կազմակերպություններից (ՀԱՍ ԻՍՕ 9000) :

3.2.3 ռիսկի գիտակցում

en risk perception

ru осознание риска

Արժեքների և մտահոգվածությունների ամբողջություն, ըստ որի **մասնակից կողմը** (3.2.1) քննարկում է կոնկրետ **ռիսկը** (3.1.1)

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Ռիսկի գիտակցումը կախված է պահանջներից, արդյունքներից և մասնակից կողմերի գիտելիքներից:

2 Ռիսկի գիտակցումը կարող է տարբերվել օբյեկտիվ տվյալներից:

3.2.4 ռիսկի հաղորդակցում**en risk communication****ru коммуникация риска**

Ռիսկի (3.1.1) մասին տեղեկատվության փոխանակում կամ այդ տեղեկատվության համատեղ օգտագործում՝ որոշում ընդունող անձի և այլ **մասնակից կողմերի** (3.2.1) միջև

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Տեղեկատվությունը կարող է վերաբերել ռիսկի գոյությանը, բնույթին, ձևին, հավանականությանը, ծանրությանը, ընդունելիությանը, դրա նվազեցման միջոցառումներին կամ այլ ասպեկտներին:

3.3 Ռիսկի գնահատման վերաբերյալ տերմինները**3.3.1 ռիսկի գնահատական****en risk assessment****ru оценка риска**

Ռիսկի վերլուծության (3.3.2) և **ռիսկի գնահատման** (3.3.6) ընդհանուր գործընթաց

3.3.2 ռիսկի վերլուծություն**en risk analysis****ru анализ риска**

Տեղեկատվության համակարգված օգտագործում՝ **ռիսկի** (3.1.1) **աղբյուրների** (3.1.5) որոշման և քանակական գնահատման համար

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Ռիսկի վերլուծությունն ապահովում է հիմք՝ ռիսկի գնահատման (3.3.6), ռիսկի նվազեցման (3.4.4) միջոցառումների և ռիսկի ընդունման (3.4.10) համար:

2 Տեղեկատվությունը կարող է ներառել պատմական տվյալներ, տեսական վերլուծության արդյունքներ, տեղեկացված կարծիք և կարող է վերաբերել մասնակից կողմերին:

3.3.3 ռիսկի նույնականացում**en risk identification****ru идентификация риска**

Ռիսկի (3.1.1) տարրերի հայտնաբերման, ցուցակագրման և նկարագրման գործընթաց

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Ռիսկի տարրերը կարող են ներառել աղբյուրներ կամ վտանգներ, իրադարձություններ, հետևանքներ և հավանականություն:

2 Ռիսկի նույնականացումը կարող է արտացոլել նաև մասնակից կողմերի շահերը:

3.3.4 աղբյուրների նույնականացում (ռիսկի կառավարում)**en source identification****ru идентификация источников**

Աղբյուրների հայտնաբերման, ցուցակագրման և նկարագրման գործընթաց

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Աղբյուրների նույնականացումն անվտանգության տեսանկյունից վտանգների նույնականացումն է (տե՛ս [1]-ը):

3.3.5 ռիսկի քանակական գնահատում**en risk estimation****ru количественная оценка риска**

Ռիսկի (3.1.1) հավանականության (3.1.3) և հետևանքների (3.1.2) արժեքների որոշման գործընթաց

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Ռիսկի քանակական գնահատման ժամանակ կարող են հաշվի առնվել արժեքը, օգուտները, մասնակից կողմերի (3.2.1) շահերը և այլ փոփոխականներ, որոնք քննարկվում են ռիսկի գնահատման ընթացքում:

3.3.6 ռիսկի գնահատում**en risk evaluation****ru оценивание риска**

Տվյալ **չափանիշների (3.1.6) հետ ըստ քանակի գնահատված ռիսկի համեմատության գործընթաց՝ ռիսկի կարևորությունը որոշելու համար**

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 Ռիսկի գնահատումը կարող է օգտագործվել ռիսկի ընդունման կամ մշակման վերաբերյալ որոշումների ընդունմանն աջակցելու համար:

2 Անվտանգության տեսանկյունից՝ տե՛ս [1]-ը:

3.4 Ռիսկի մշակման և ռիսկի կառավարման վերաբերյալ տերմինները**3.4.1 ռիսկի մշակում****en risk treatment****ru обработка риска**

Ռիսկի (3.1.1) վերափոխման վերաբերյալ միջոցների ընտրության և իրագործման գործընթաց

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1 «Ռիսկի մշակում» տերմինը երբեմն օգտագործում են հենց նույն այդ միջոցների նշման համար:

2 Ռիսկի մշակման վերաբերյալ միջոցները կարող են ներառել ռիսկից խուսափելը, ռիսկի բարելավումը (3.4.3), փոխանցումը (3.4.7) կամ պահպանումը (3.4.9):

3.4.2 ռիսկի հսկողություն

en risk control

ru управление риском

Գործողություններ, որոնք իրականացվում են **ռիսկի կառավարման** (3.1.7) շրջանակներում որոշումների կատարման նպատակով

Օ ա ն ո թ ու թ յ ու ն : Ռիսկի հսկողությունը կարող է ներառել մշտադիտարկում (մոնիթորինգ), վերազնահատում և ընդունված որոշումների համապատասխանության ապահովմանն ուղղված գործողություններ:

3.4.3 ռիսկի բարելավում

en risk optimization

ru оптимизация риска

Ռիսկի (3.1.1) հետ կապված գործընթաց` ուղղված բացասական **հետևանքների** (3.1.2) նվազարկմանը և դրական **հետևանքների** (3.1.2) և, համապատասխանաբար, դրանց **հավանականության** (3.1.3) առավելագույն օգտագործմանը:

Օ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ռ :

1. Անվտանգության տեսանկյունից ռիսկի բարելավումն ուղղված է ռիսկի նվազեցմանը:
2. Ռիսկի բարելավումը կախված է ռիսկի չափանիշներից (3.1.6)` հաշվի առնելով արժեքը և օրենսդրական պահանջները:

3.4.4 ռիսկի նվազեցում

en risk reduction

ru снижение риска

Գործողություններ` ձեռնարկված ռիսկի հետ կապված **հավանականության** (3.1.3), բացասական **հետևանքների** (3.1.2) նվազեցման նպատակով կամ մեկի և մյուսի համար միաժամանակ

3.4.5 իրադարձության հետևանքի նվազում (ռիսկի կառավարում)

en mitigation

ru уменьшение (последствия события)

Որոշակի **իրադարձության** (3.1.4) ցանկացած բացասական **հետևանքի** (3.1.2) սահմանափակում

3.4.6 ռիսկի կանխում

en risk avoidance

ru предотвращение риска

Ռիսկային իրադրության մեջ ներքաշված չլինելու վերաբերյալ որոշում կամ դրանում ներքաշվելը կանխող գործողություն

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Որոշումը կարող է կայացվել ռիսկի գնահատման արդյունքներով:

3.4.7 ռիսկի փոխանցում

en risk transfer

ru перенос риска

Ռիսկից (3.1.1) առաջացած կորուստների ծանրության կամ օգուտների բաժանում այլ կողմերի միջև

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ե ռ :

1 Օրենսդրական կամ պարտադիր պահանջները կարող են սահմանափակել, արգելել կամ հանձնարարել որոշակի ռիսկի փոխանցումը:

2 Ռիսկի փոխանցումը կարող է իրականացվել ապահովագրության միջոցով կամ այլ համաձայնագրերով:

3 Ռիսկի փոխանցումը կարող է ստեղծել նոր ռիսկ կամ ձևափոխել գոյություն ունեցողը:

4 Աղբյուրի փոխանցումը չի կարող լինել ռիսկի փոխանցում:

3.4.8 ռիսկի ֆինանսավորում

en risk financing

ru финансирование риска

Ռիսկի մշակման (3.4.1) և զուգորդող ծախսերի համար ֆինանսական միջոցների նախատեսում

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Որոշ բնագավառներում ռիսկի ֆինանսավորումը վերաբերում է միայն ռիսկի հետ կապված ֆինանսական հետևանքների սուբսիդավորմանը:

3.4.9 ռիսկի պահպանում

en risk retention

ru сохранение риска

Որոշակի **ռիսկից** (3.1.1) առաջացած կորուստների ծանրության կամ օգուտների ընդունում

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Ռիսկի պահպանումը չի ներառում ռիսկի մշակումն ապահովագրության արդյունքում կամ ռիսկի փոխանցումն այլ միջոցներով:

3.4.10 ռիսկի ընդունում

en risk acceptance

ru принятие риска

Ռիսկի ընդունման որոշում

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Ռիսկի ընդունումը կախված է դրա չափանիշներից (3.1.6):

3.4.11 մնացորդային ռիսկ

en residual risk

ru остаточный риск

Ռիսկ (3.1.1), որը մնում է մշակումից (3.4.1) հետո

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Անվտանգության տեսանկյունից՝ տե՛ս [1]-ը

Տերմինների այբբենական ցանկ

աղբյուր (ռիսկի կառավարում)	3.1.5
բարելավում ռիսկի	3.4.3
գիտակցում ռիսկի	3.2.3
գնահատական ռիսկի	3.3.1
գնահատում ռիսկի	3.3.6
գնահատում ռիսկի քանակական	3.3.5
ընդունում ռիսկի	3.4.10
իրադարձություն (ռիսկի կառավարում)	3.1.4
կանխում ռիսկի	3.4.6
կառավարում ռիսկի	3.1.7
կողմ շահագրգիռ (ռիսկի կառավարում)	3.2.2
կողմ մասնակից (ռիսկի կառավարում)	3.2.1
հաղորդակցում ռիսկի	3.2.4
համակարգ ռիսկի կառավարման	3.1.8
հավանականություն (ռիսկի կառավարում)	3.1.3
հետևանք (ռիսկի կառավարում)	3.1.2
հսկողություն ռիսկի	3.4.2
մշակում ռիսկի	3.4.1
նվազեցում ռիսկի	3.4.4
նվազում իրադարձության հետևանքի (ռիսկի կառավարում)	3.4.5
նույնականացում աղբյուրների (ռիսկի կառավարում)	3.3.4
նույնականացում ռիսկի	3.3.3
պահպանում ռիսկի	3.4.9
ռիսկ	3.1.1
ռիսկ մնացորդային	3.4.11
չափանիշներ ռիսկի	3.1.6
վերլուծություն ռիսկի	3.3.2
փոխանցում ռիսկի	3.4.7
ֆինանսավորում ռիսկի	3.4. 8

Տերմինների այբբենական ցանկ անգլերեն

consequence	3.1.2
event	3.1.4
interested party	3.2.2
mitigation	3.4.5
probability	3.1.3
residual risk	3.4.11
risk	3.1.1
risk acceptance	3.4.10
risk analysis	3.3.2
risk assessment	3.3.1
risk avoidance	3.4.6
risk communication	3.2.4
risk control	3.4.2
risk criteria	3.1.6
risk estimation	3.3.5
risk evaluation	3.3.6
risk financing	3.4.8
risk identification	3.3.3
risk management	3.1.7
risk management system	3.1.8
risk optimization	3.4.3
risk perception	3.2.3
risk reduction	3.4.4
risk retention	3.4.8
risk transfer	3.4.7
risk treatment	3.4.1
source	3.1.5
source identification	3.3.4
stakeholder	3.2.1

Տերմինների այբբենական ցանկ ռուսերեն

анализ риска	3.3.2
вероятность	3.1.3
идентификация источников	3.3.4
идентификация риска	3.3.3
источник	3.1.5
коммуникация риска	3.2.4
критерии риска	3.1.6
менеджмент риска	3.1.7
обработка риска	3.4.1
оптимизация риска	3.4.3
осознание риска	3.2.3
оценивание риска	3.3.6
оценка риска	3.3.1
оценка риска количественная	3.3.5
перенос риска	3.4.7
предотвращение риска	3.4.6
принятие риска	3.4.10
последствие	3.1.2
риск	3.1.1
риск остаточный	3.4.11
система менеджмента риска	3.1.8
снижение риска	3.4.4
событие	3.1.4
сохранение риска	3.4.9
сторона заинтересованная	3.2.2
сторона причастная	3.2.1
уменьшение (последствия события)	3.4.5
управление риском	3.4.2
финансирование риска	3.4.8

Մատենագիտություն

[1] ԳՕՍՏ Ռ 51898-2002 Անվտանգության ասպեկտներ. Ստանդարտներում ներառման կանոններ

ՍԴ 01.040.03,

03.100.50

Հանգուցային բառեր. ռիսկ, հավանականություն, իրադարձություն, ռիսկի կառավարում, ռիսկի գնահատական, իրադարձության հետևանքի նվազում, ռիսկի պահպանում

Ստանդարտների ազգային
ինստիտուտ ՓԲԸ տնօրեն

Ե. Ազարյան

Ազգային և միջազգային ստանդարտների
հետազոտման և կիրառման կանխատեսումների
բաժնի պետ

Մ. Խաչատրյան

գլխավոր մասնագետ

Ա. Պողոսյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության
նախարարության լեզվի
պետական տեսչության պետ

Լ. Միրզոյան

Նամակ N 303

2009-05-11

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՏ «Ռիսկի կառավարում. Տերմիններ և սահմանումներ»
 Հայաստանի Հանրապետության ստանդարտի նախագծի

1 Ստանդարտի մշակման հիմքը

Ստանդարտի մշակման հիմքն է Հայաստանի Հանրապետության 2009 թվականի ստանդարտացման ծրագիրը:

2 Ստանդարտացման օբյեկտի բնութագիրը

Ստանդարտի նախագծում տրված են ռիսկի կառավարման վերաբերյալ հասկացությունները՝ համապատասխան սահմանումներով:

3 Ստանդարտի գործարկումը

Ստանդարտի գործարկումը նախատեսվում է 2009 թվականին:

4 Փոխկապակցվածությունը ստանդարտացման այլ նորմատիվ փաստաթղթերի հետ

Ստանդարտի գործարկման հետ զուգընթաց անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում՝ ազգային ստանդարտի կարգավիճակով գործողության մեջ դնել ԳՕՍՏ Ռ 51898-2002 «Անվտանգության ասպեկտներ. Ստանդարտներում ներառման կանոններ» Ռուսաստանի Դաշնության ազգային ստանդարտը:

5 Տեղեկություններ ստանդարտի նախագծի համաձայնեցման վերաբերյալ

Ստանդարտի նախագիծը նախատեսվում է համաձայնեցնել՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ պաշտպանության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ քաղաքաշինության նախարարությունների հետ:

Ստանդարտի նախագիծը համաձայնեցված է ՀՀ կրթության և գիտության նախարարության Լեզվի պետական տեսչության հետ:

6 Տեղեկատվական աղբյուրներ

Նախագծի մշակման ժամանակ օգտագործվել են ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 73:2002 «Ռիսկի կառավարում. Բառարան. Ստանդարտներում կիրառման ուղեցույց» (ISO/IEC Guide 73:2002 «Risk management-Vocabulary-Guedelines for use in standards») միջազգային ուղեցույցը:

Ազգային և միջազգային ստանդարտների
 հետազոտման և կիրառման կանխատեսումների
 բաժնի պետ

Մ. Խաչատրյան

գլխավոր մասնագետ

Ա. Պողոսյան